ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
21 մարտի 2019 թվական N28
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 481-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 46.2 կետի թ) ենթակետի, 2003թ. դեկտեմբերի 24-ի N1746-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2017 թվականի մարտի 17-ին տրված օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/290 թույլտվության փոփոխությունը, <<Մեղրու ՃՇՇՁ>> ՍՊԸ-ի գրավոր հայտը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ գյուղի 6-րդ փողոցի թիվ 4/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N07032019-09-0014 վկայական) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության 1.40061 հա հողամասը կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով, տարեկան մեկ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր հիսունվեց (173 956) ՀՀ դրամ վճարով տրամադրել <<Մեղրու ՃՇՇՁ>> ՍՊԸ-ին՝ ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ ----------
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ----------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 21
ք. Մեղրի